



41. ԶՈՒՏՈՂԻ ՄԱԼԸ ՈՒՏՈՂԻՆ ՀԱԼԱԼ Ա.

Մի հարուստ մարդ առավոտը դուս ա գալի էթում բազար՝ տան
հմար զադ-մադ առնելու էս մարդը ջերումը ումենում ա մի ոսկի,
մըն էլ մի կոպեկանոց։ Շամփին օրան մի աղքատ ա ռանոտ գալի,
ողորմություն ուղղում։ Էս մարդը ձեռը ջերն ա տանում, որ մի կո-
պեկանոցը հանի տա աղքատին՝ ոսկին ա ձեռն ընկնում, ու շունքի
փողում էր, մըկ էլ մտիկ չի անում՝ տալիս ա, անց կենում։

Բազարումը զադ առնելիս ձեռը տանում ա ջերը, որ ոսկին հա-
նի, խուրդա անի, տենում ա՝ ոսկի չկա, մենակ մի կոպեկանոց ա:
Նոր գլխի ա ընկնում, որ աղքատին ա տվի։

Էն սհաթը գալիս ա էն աղքատին գտնում, աղանշաք անում.—
Ա՛յ բարի, — ասում ա, — էն վախտը քեզ փող տալիս շըշկլվեցի՝ մի
կոպեկանոցի տեղակ ոսկի տվի. չի՞լիս եդ տաս։

Աղքատը օրդում, կրակն ա ընկնում, թե չէ՛, իրան ոսկի չի
տվե. հրե՛ս, ուղում ա գա, տենա իրա փողերը։ Հարուստն էլ բան չի
ասում. զրադ ա քաշվում ու մի տեղ տափ կենում, որ տենա աղքա-
տը ո՞րդի ա էթում՝ ինքն էլ եննուցն էթա. Նրա բախտիցը՝ աղքատն
էլ շուխտ աշքով մայիֆ ա ըլնում։

Իրիկունը աղքատն ուրախ-ուրախ էթում ա տուն, հարուստն էլ
նրա եննուցը. Աղքատը էթում ա, էթում՝ մննում մի տուն, հարուստն
էլ նրա եննուցն ա մննում։ Աղքատը տախտի տակիցը շորս բղուզ ա

հանում՝ մեջները լիբը փող, որի մեջ սև փող, որինը՝ սիպտակ, որինը՝ մանեթանոց, որինն էլ՝ ոսկի. ու սաղ օրվա հավաքած փողերը իրանց տեղերն ա ածում. սև փողը՝ սև փողի վրա, սիպտակը՝ սիպտակի, մանեթանոցը՝ մանեթանոցի: Էն նոր բերած ոսկին էլ ծըրընգալեն քցում ա ոսկըքանց վրեն:

«Ա՛ռեք,— ասում ա, — ո'սկիք, ձեզ ըսօր մի թաղա ընկեր էլ եմ բերե»:

Աղքատն էլ եդ բըղըզները դնում ա տախտի տակը, ինքն էլ պառկում քնում: Հարուստը էլ վախտ շի կորցնում, տախտի տակիցը ուսպով չորս չորս բղուզն էլ վեր ա ունում, դուռը բաց անում ու ծլկվում:

Առավոտը որ լիսանում ա թե չէ՝ աղքատը էլի դուս ա գալի աղքատություն անելու Սաղ օրը ինչ որ հավաքում ա՝ հավաքում, իրիկումը էլ եդ տուն ա գալի: Տախտի տակիցը ուզում ա փողի բղըզները հանի, որ հավաքած փողերը իրանց տեղերն ածի՛ մնում ա սառած, որ տենում ա՝ ո'նչ փող կա, ո'նչ զադ: Շատ ա զիսին տալի, լաց ըլնում, համա ձեռը զադ շի ընկնում:

Մի օր էլ էս աղքատը բազարի դուանը ողորմություն էր կիտում: Էն սրա փող տանող հարուստ մարդը տեհավ թե չէ՝ ճանանշեց. կանշեց տարավ աշպաղխանեն, իրա փողովը կերակուր ածիլ տվեց նրա հմար, տվեց ուտի:

Աղքատը ի'նշքամ զոռ էր անում¹, կերակուրը բողազովը կուկ չէր էթում:

Աղքատը ինքն իրան միտք արեց. «Բա՞լի էս իմ փողն ա, որ կուկ շի էթում. կա, չկա՝ էս մարդն ա փողերս գողացե»: էթում ա դուզ էն հարստի յախեն զայիմ բռնում.— Աղպե՛ր, — ասում ա, — իմ փողերը դու ես գողացե՝ տո՛ւ:

— Զանց՝մ, գյո՛զըմ, — ասում ա հարուստը, — ես քեզ լավություն արի, որ դու նրա տեղակ ինձ վրա հլա² շառ էլ քցե՛ս:

Աղքատը կոփվ, զալմաղալ. — Չէ՛, իմ փողերը դո՛ւ ես տարի, որ դու ես տարե:

Հարստին քաշ տալոն տանում ա թագավորի կուշտը:
Թագավորը հարցնում ա. — Բա՛բի, ի'նչ ես ուզում:

¹ Տպագիր աեքստում՝ զորամ էր. ուղղումը բանահավաքինն է (Վ. Կ.):

² Տպագիր աեքստում՝ դեռ. ուղղումը բանահավաքինն է (Վ. Կ.):

— Թադավորն ապրած կենա, էս մարդը փողերս գողացել ա,
շի տալի:

— Ո՞րդիան գիտաս, որ սա' ա գողացե,— հարցնում ա թա-
դավորը:

— Չունքի ես իմ փողովը որ զադ ի առնում՝ ըսկի բողազովս
կուլ չեր էթում։ Հմի էս մարդը բազարումը ինձ կերակրի ղոնաղ
արեց՝ շկարացի ուտեմ, կուլ չգնաց։ Էրնում ա, որ գողացած փո-
ղերս էս մարդի կշտին ա:

— Թե որ քու փողը քեզ կուլ չի էթում,— ասում ա թագավո-
րը,— բա' էլ քու ընշի՞ն ա պետք։ Հազի՛ր թող նա' բանացնի՝ ում
կուլ ա էթում։ Դնա', բա՛րի, դնա' բանիդ։ Քու փողը էս մարդին
իրա մոր ծծի կաթի նման հալալ ա, — ասում ա թագավորը ու շու-
դար անում։

